

02 նոյեմբեր, 2022թ.

«Euromoney» 2022. HSBC Հայաստանը՝ կորպորատիվ ծառայությունների ոլորտում «Շուկայի առաջատար» և «Լավագույն ծառայություններ մատուցող բանկ»

Ըստ «Euromoney» հեղինակավոր ամսագրի 2022 թ. հարցման՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ HSBC Հայաստան/Բանկ) հինգերորդ տարին անընդմեջ ճանաչվել է կորպորատիվ ծառայությունների ոլորտում «Շուկայի առաջատար բանկ»: Բանկն այս տարի արժանացել է նաև ոլորտում «Լավագույն ծառայություններ մատուցող բանկ» մրցանակին:

Հանդիսանալով ոլորտի առաջատար պարբերական՝ «Euromoney»- ն ողջ աշխարհում իրականացնում է ամենամյա հարցումներ ֆինանսական կազմակերպությունների հաճախորդների շրջանում: Վերջիններս, գնահատելով իրենց հետ համագործակցող ֆինանսական հաստատությունները, ինչպես նաև նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակը, որոշիչ դեր են ունենում հարցման արդյունքների վրա:

Բանկի կորպորատիվ ծառայությունների զարգացման և կառավարման վարչության ղեկավար Միքայել Պետրոսյանը նշում է. «Այս մրցանակները արտացոլում են հաճախորդների գոհունակությունը մեր մատուցած ծառայություններից, ինչը մեծագույն ձեռքբերում է: Հարցման արդյունքները վկայում են, որ HSBC Հայաստանի որդեգրած թվայնացման և ծառայությունների պարզեցման ռազմավարությունը վստահության է արժանանում հաճախորդների շրջանում: Դա մեզ քաջալերում է շարունակել մեր սկսած ճանապարհը»:

Պարոն Պետրոսյանը վստահեցրեց, որ Բանկը շարունակելու է անել առավելագույնս իր ամենախստապահանջ հաճախորդների կարիքները բավարարելու և նրանց ճանապարհը դեպի առաջընթաց ուղղորդելու նպատակով:

Նշենք, որ այս ցուցանիշներին զուգահեռ HSBC Խումբը ևս «Euromoney» պարբերականի կողմից արժանացել է մրցանակի՝ ճանաչվելով կորպորատիվ ծառայությունների ոլորտում «Շուկայի առաջատար» աշխարհում:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 63 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի

ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2022թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,985 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 6 գրասենյակի և մոտ 310 աշխատակցի միջոցով: 2021 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 261 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: